

Հ. Ե. Ե. Հ. ՀՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

НАРКОМЗЕМ С.С.Р.А.
НАУЧНО-ИССЛЕДОВ.
СЕКТОР

Պրոֆ. Մ. ԲՈՒՄԱՆՅԱՆ

ԴԱՇՏԱՄՈՒԱԽՈՏԱՅԻՆ
ԹԱՎՈՏ ՎԻԿԵՐԻ
ԲԱԶՄԱՀԱՐ ԶԵՎԵՐԸ

Проф. М. ТУМАНЯН

МНОГОУКОСНЫЕ ФОРМЫ
СОРНОПОЛЕВЫХ МОХНАТЫХ ВИК

Գ Ե Տ Դ Դ Ն

ГОСИЗДАТ ССРА

ԵՐԵՎԱՆ - 1998 - ԶՐԻՎԱՆ

59081

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՆ
ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՍԵԿՏՈՐ

НАРКОМЗЕМ С. С. Р. А.
НАУЧНО-ИССЛЕДОВАТ.
СЕКТОР

Պրոֆ. Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԴԱՇՏԱՄՈՒԱԽՈՏԱՅԻՆ
ԹԱՎՈՏ ՎԻԿԵՐԻ
ԲԱԶՄԱՀԱՐ ԶԵՎԵՐԸ


Проф. М. ТУМАНЯН

МНОГОУКОСНЫЕ ФОРМЫ
СОРНОПОЛЕВЫХ МОХНАТЫХ ВИК

ՊԵՏՀՐԱՆ

ГОСИЗДАТ ССРА

ՅԵՐԵՎԱՆ — 1932 — ԵՐԻՎԱՆ



Պետերադի տպարան
Գլավիտ 7442 (բ)
Հրատ. № 2163
Պատվեր № 1115
Տիր. 1000



Սրբագրիչներ՝ Հ. ՍԱՌԻԿՅԱՆ, Ա. ՀՈՒՂՈՒՐՅԱՆ

Հանձնված է արտադրության 1/IV 1932 թ. Ստ. Ֆ. Ա.
Ստորագրված է տպագրելու 11/VI 1932 թ.

ԴԱՇՏԱՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԹԱՎՈՏ ՎԻԿԵՐԻ ԲԱԶՄԱՀԱՐ ՁԵՎԵՐԸ

Գյուղինստիսուէի Մասն. Յերկրագործութեան Ամբիոնի հետադոսական
աշխատանքներից

Խորհրդային Հայաստանի դաշտային կուլտուրաների ու-
սումնասիրութեանը ցույց տվեց, վոր հացաբույսերի ցանքերի
մեջ բազմազան ուժեղ կերպով տարածված են գաշտամուլախոտա-
յին վիկերի բազմաթիվ տեսակներն ու ձևերը: Դրանց կարելի է
պատահել, սկսած դաշտավայրերից մինչև բարձր լեռնային շրջ-
անները՝ 700—3000 մ. բարձրութեան սահմաններում: Մի շարք
այլ մուլախոտերի հետ միասին դրանց կարելի է հանդիպել աշնա-
նացան և դարնանացան ցորենների, գարու, հաճարի, վոսպի և
այլ բույսերի ցանքերի մեջ:

Դաշտամուլախոտային այդ վիկերը շատ սովորական բույսեր
են լեռնային մարգագետիններում, արոտատեղերում և խոտհարք-
ներում: Համարյա ամեն մի գոտի ունի իրեն համապատասխան
քիչ թե շատ տարածված մուլախոտային վիկերի տեսակները և
ձևերը: Ի միջի այլոց նկատենք, վոր միամյա տեսակները տա-
րածված են բոլոր շրջաններում, իսկ բազմամյաները՝ գլխավո-
րապես լեռնային շրջաններում:

Ահա, թե ինչպիսի տեսակներում ըստ գոտիների ինչպես են տա-
րածված միամյա վիկերի տարբեր տեսակները (species):

№	№	ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՐԱԺՄԱՆ ՁԵՋՈՆՆԵՐԸ			
			Դաշտային 600-1000 մետր.	Նախալեռն. 1100-1400 մետր	Լեռնային 1500-2000 մետր	
1	Λ.	hyrcanica F. et M.	+	—	—	Արարատ դաշտ. — Մեղրի
2	V.	Hajastana Gross.	+	—	—	Արարատ. դաշտ. — Յերեվ. շրջան. քարքարոտ, չոր լանջերում.
3	V.	Serratifolia Jacq.	+	—	—	Արարատ. դաշտ. — մոլախո- տերով հարուստ խոնավ տեղերում.
4	V.	picta F. et M.	+	—	—	Արարատ. դաշտ. — Արաք- սին կից մարգագետին- ներում.
5	V.	pannonica Jacq.	—	+	+	Յերևան, Լոռի, Ջանդե- գուր, Լենինական, Մեղ- րի — ցանքերի մեջ.
6	V.	grandiflora Scop	+	+	+	Յերևան — Մարգագետ. այ- գիներում և ցանքերի մեջ
7	V.	narbonensis L.	+	+	—	Յերևան — Արագած. ցան- քերի մեջ և մոլախոտե- րով հարուստ տեղերում.
8	V.	Ervilia (L) W.	—	+	+	Յերևան. Ջանդեգուր. Չոր քարքարոտ տեղերում. դարու և ցորենի ցան- քերի մեջ:
9	V.	cinerea M. B.	—	+	+	Յերևան. կիսա-անտառ. չոր տեղեր. ցանքերում.
10	V.	angustifolia Roth.	—	+	+	Յերևան, Լոռի, Լենինա- կան: Մարգագետ. թփուտներում և ցան- քերում.
11	V.	peregrina L.	+	+	+	Յերևան — ցանքերի մեջ, չոր տեղերում.
12	V.	megalosperma M. B	—	+	+	Յերևան — ցանքերի մեջ.
13	V.	sativa L.	+	+	+	Ամբողջ Հայաստանում — ցանքերի մեջ, մարգա- գետին. և թփուտներում.
14	V.	villosa Roth.	+	+	+	Ամբողջ Հայաստ. — ցանքե- րի մեջ, մարգագետին. և թփուտներում.

Նշված տեսակներից Հայաստանում ամենից շատ տարածված են. — *V. sativa*, *V. villosa*, *V. angustifolia* և *V. pannonica* մանավանդ առաջին 2 տեսակները, վերոնք ուղեկցում են հացաբույսերին բոլոր դոտիններում և շրջաններում: Տեղ-տեղ աշնանացանի մեջ դրանք (*V. Sativa* և *V. villosa*) այն չափով են գերակշռում, վոր հատուկ ցանքերի տպավորություն են թողնում: Շատ հետաքրքրական է այն հանգամանքը, վոր տեղ-տեղ (Զանգեզուր), նկատի ունենալով դրանց սննդաբար լինելը, գյուղացիությունը չի չիլ աշխատում դրանցից ազատվել և ցորենը ջրադաց է տանում՝ առանց դտելու վիկերից: Վերջինները հաճախ շատ խոշոր տոկոս են կազմում (20-ից ավել):

Ինքնըստինքյան պարզ է, վոր մոլախոտային վիկերի այսպիսի խոշոր տոկոսը չի կարող չազդել հողերի բերրության վրա՝ ազոտ պարունակող նյութերի ընդհանուր քանակը բարձրացնելու տեսակետից: Մյուս կողմից այն, անշուշտ, պիտի ազդի նաև դարմանի ընդհանուր վորակի վրա, բարձրացնելով նորա սննդառությունը:

V. villosa-ի ամբողջ բաղմազանությունը ամենից լավ նկատվում է դաշտային և նախալեռնային շրջաններում, իսկ *V. sativa*-ինը՝ գլխավորապես լեռնային շրջաններում:

Դաշտամոլախոտային վիկերի մյուս տեսակներն ավքան ել հաճախ չեն պատահում:

Բաղմամյա մոլախոտային վիկերից պետք է նշենք հետևյալ տեսակները:

1. *V. Balansae* Boiss. մինչև 2000 մ.—Յերեան—Աղմաղան, Լոռի՝ անտառներում, մարգագետիններում, խոտհարքներում և ցանքերի մեջ:
2. *V. truncatula* Stev. մինչև 2000 մ.—Յերեան—Աղմաղան, Լոռի, Դիլիջան՝ անտառներում, թփուտներում, ստվերոտ տեղերում:
3. *V. alpestris* Stev. 2546-3000 մ.—Յերեան—Ալալյան մարգագետիններում:

4. *V. persica* Boiss. 1500-2000 մ.—Յերևան, Աղմաղան՝ քար-քարոտ խճախառն տեղերում, խոտհարքներում
5. *V. elegans* Juss. 1200-2000 մ.—Աղմաղան, Դարալագլազ Սևանի հարավային լեռնաշղթան, Չոբ տեղերում, արոտատեղերում, ցանքերում:
6. *V. stenophylla* Velen. — Յերևան — գետակների ափերին, ըստ պրոֆ. Ն. Տրոփյկու տվյալների, մեզ մոտ հազվագյուտ է, բայց գլխավ. կովկասյան լեռնաշղ. պատահում է համեմատաբար ավելի հաճախ:
7. *V. variabilis* Freyn et Sint. 1600-2000 մ.—Աղմաղան, Սուխոֆանտան, Հադիս, Աբաղածի հարավ. լանջերը՝ Մարգագետիններում, խոտհարքներում և ցանքերի մեջ:

Բաղմամլա վիկերը գլխավորապես պատահում են Հայաստանի լեռնային և բարձր լեռնային շրջաններում՝ 1500-3000 մ. սահմաններում: Դրանցից *V. alpestris*-ը հանդիսանում է ամենաբարձր լեռնային ձևերից մեկը: Բոլորից ցածր իջնում է *V. elegans*-ը (1200 մ), այն էլ պատահում է վոչ շատ հաճախ:

Դրանց տարածման վայրերն են լեռնային խոտհարքները՝ մարգագետինները և արոտատեղերը, մի մասը՝ *V. variabilis*, *V. elegans*, *V. Balansae* և այլն, պատահում է ցանքերի մեջ, իսկ մի քանիսներն էլ՝ *V. truncatula*, *V. Balansae* և այլն անտառներում:

Աղմաղանի շրջանում գտնվող գյուղերի ցեղահողերի խոտը (паровое сено) հաճախ բաղկացած է հետևյալ վիկերի ձևերի խառնուրդներից՝ *V. variabilis*, *V. elegans* և այլն: Այս բաղմամլա վիկերը տեղացիներին հախտնի յեն «խուլորս» անունով: Միավյա վիկերին «գյուլուլ» կամ «ֆիկ» են անվանում: Դրանց խոտը բավական բարձր է գնահատվում:

Կանգ չառնելով Ս. Հայտատանում տարածված բոլոր դաշ-
տամուխոտային և արոտային վիկերի տեսության վրա, պիտի
նշենք, Վոր դրանցից շատերն ունենալով վերին աստիճանի ար-
ժեքավոր, տնտեսական հատկութուններ, շատ խոշոր նշանակու-
թյուն կարող են ունենալ գործնական սելեկցիայի և մշակու-
թյան համար: Այս տեսության մեջ մենք կանգ կառնենք դաշտա-
մուխոտային թավոտ վիկերի (v. villosa-ի) այն ձևերի վրա,
վորոնք հետադոտության ընթացքում առանձնացված են լեղել
վորպես բազմահար, բազմաձյաներին մոտեցող ձևեր և վորոնց
շուրջը հետադոտում կատարվել են վորոշ սելեկցիոն աշխատանք-
ներ (Տես նկ. 1 և 2):

Մեր հայտնաբերած վիկերի մշակության աշխատանքներին
սկզբնական շրջանում մասնակցել են («Ձագ» Ս. տնտեսութունում)
Մասն. Յերկրագործության ամբիոնի ասիստենտ Բ. Գաբասե-
ֆիրյանը, նույն ամբիոնի նախկին ասիստենտ Վ. Աստվածատըր-
յանը, վորն ուսումնասիրվող առանձին բույսերի մշակութունն է
կատարել, իսկ մորֆոլոգիական ուսումնասիրութուններին մաս-
նակցել է Ա. Ազատյանը, վորը կատարել է մոտ 120 բույսերի
մորֆոլոգիական նկարագրութունը, ստուգելու համար մեր նախ-
նական տվյալները:

Հետադոտութունների ժամանակ մենք հաճախ ուշադրու-
թյուն ենք դարձրել այն հանգամանքի վրա, վոր հացաբույսերի
մեջ մուխոտային խառնուրդ կազմող թավոտ վիկերը աչքի չեն
ընկնում մի շարք կարևոր և տնտեսապես ոգտակար նշանակու-
թյուն ունեցող հատկություններով, ինչպես՝ փարթամ աճեցողու-
թյամբ, վաղահասությամբ, լավ տերևակալությամբ, ուժեղ թփա-
կալությամբ և այլն, վորոնք կերարույսերի համար վերին աստի-
ճանի արժեքավոր են: Դրանց մեջ կան ձևեր, վորոնք ահագին
քանակությամբ կանաչ մասսա չեն տալիս և քանակով ու վո-
րակով վոչնչով հետ չեն մնում նույն վիկերի կուլտուրական
ձևերից: Մյուս կողմից, վորպես տեղական ձևեր, դրանք արդեն
հարմարված են Հայաստանի բարձրավանդակի բացառիկ չորու-
թյամբ աչքի ընկնող հողային կլիմայական անբարեհաջող պայ-
մաններին, հետևապես մշակության մեջ մտնելու, ինտրոդուկցիա-
յի համար դրանք վերին աստիճանի արժեքավոր նյութ են հան-
դիսանում:

Բայց դրա համար կարևոր և կատարել սկզբնական սելեկցիոն աշխատանքներ, վորովհետև վերոհիշյալ հետաքրքիր ձևերի հետ միասին նույն վիկերի մեջ գտնվում են բավականաչափ տնտեսապես վոչ արդյունավետ և վոչ ձեռնտու ձևեր: Այդ իսկ պատճառով հերթական խնդիր և՛ ուսումնասիրել այդ վիկերի բուսաբանական մորֆոլոգիական և կենսաբանական կազմությունը — նրանցից արժեքավոր և հետաքրքրական ձևեր ստանալու համար:

Բուսաբանական տեսակետից այդ խումբը հանդիսանում և v. villosa-յին պատկանող մորֆոլոգիական - կենսաբանական ձևերի բավական խաչաբղետ խառնուրդ:

Վիկերի այս տեսակը (species), վոր շատ տարածված և Հայաստանում, աչքի չե ընկնում ձևերի ամենամեծ բազմազանությունում: Վերջինս իբ հերթին հետևանք և Հայաստանում գոյություն ունեցող բնապատմական-աշխարհագրական սլայմանների բազմատեսակության և դանազանության՝ ուղղահայաց գծով 600-3000 մ. բարձրության սահմաններում: Այդ բազմազանություն մեջ պակաս դեր չի խաղում և այն հանգամանքը, վոր վիկերն ընդհանրապես խաչածե կերպով են բեղմնավորվում:

Ա. Ա. Գրոսգեյմը կարծես հակված և այս վիկերը դասել v. Reuteriana — տեսակի շարքը, վորն առաջին անգամ նկարագրել և Boissier-ը թավրիդի շրջակայքում, 1848-49 թ. իբ ժողոված նշումների հիման վրա:

Բայց այս վիկերն իրենց բուսաբանական մորֆոլոգիական հատկությունների ամբողջ կոմպլեքսով ավելի մոտ են v. villosa-յին քան v. Reuteriana-յին, իսկ մյուս կողմից այն հատկությունները, վորոնք հարկադրո՞ւմ ելին դրանց առանձնացնել վորպես v. Reuteriana առանձին տեսակ, այնքան բնորոշ և ելական չեն:

Չե՞ վոր նույն v. villosa-յի տեսակի սահմաններում, հիմք ունենալով նրանց այս կամ այն առանձնահատկությունները, կարելի չե նշարել անցողական ձևերի ամբողջ մի գամմա, վորը մորֆոլոգիայի տեսակետից իբ մեջ ամփոփում և ամենածայրահեղ արտահայտությունները:

Այստեղ կարելի չե տեսնել բոլոր անցողական ձևերն՝ սկսած ուժեղ մազմուկներից ծածկվածներից մինչև բոլորովին մերկ, շատ նեղ տերևանի ձևերից մինչև լայն տերևանիները, թղուկ

ձևերից մինչև հսկաները, պակասող կամ ավելի ուսանելից մինչև համարյա կանգուն ձևերը և այլն:

Սակայն նկատի առնելով, Վոթ դրանք խաչածե կերպով են բեղմնավորվում և բազմանում, Վոթ վեգետատիվ հատկութունների տեսակետից այստեղ նկատվում է անցողական ձևերի ամենալայն ամպլիտուդա և, Վոթ ավել բազմադանության ելեմենտները և նրանց հատկութունները վիկի միենույն տեսակի համար կարող են ամենալայն սահմաններում ձևափոխման լինթաբեկել — մեղ թվում է, Վոթ մեր այս վիկերը v. Reuteriana առանձին տեսակ համարելու համար, կարծես թե բավականաչափ հիմք չկա (Տես Նկ. 3):

Հայաստանում հայտարբերած v. villosa-յի առանձին այլ տեսակներից (varietas) այստեղ նշենք հետևյալները, Վոթնք այս կամ այն հատկությամբ տարբերվում են հիմնական ձևերից:

V. villosa Roth.

- 1 var. glabrescens Roch. — Ցողունները համարյա մերկ են, կաղմում են չնչին խառնուրդ.
- 2 var. latifolia Formanen. — Տերևիկներն ելիպսոածե են, տալիս և նուրբ մասսա, աննշան խառնուրդ.
- 3 var. albiflora Schur. — Ծաղիկները սպիտակ են, հազվագյուտ են.
- 4 var. angustifolia Lindm. — Ունի կարճ ծաղկակոթուն, ծաղիկները սակավաթիվ են, շատ հազվագյուտ.

Հիմնականում Ս. Հայաստանի դաշտամուտախոտային վիկերը մորֆոլոգիայի տեսակետից կարելի է բնութագրել հետևյալ հատկություններով, չնայած դրանք լինթաբեկվում են ուժեղ վարիացիաների և ձևափոխման:

Ծիլերը ներկված են անտոցիանով, ծլում են միաժամանակ, սովորաբար, ցանկուց 6-8 ուր հետո: Ունի լավ զարգացած խոր գնացող կենտրոնական արմատ, ճոխ զարգացած մազմզուկային ցանցով արմատների վրա գտնվում են մեծ քանակությամբ լավ զարգացած «աղուտ կլանող» պալարիկներ. ցողունները պակասող են կամ փաթաթվող: Առանձին գծերի ճեղքավորվելիք լերբեմն ստացվում են խիստ փոփոկ կամ կիսականգուն ցողունավոր

ձևեր: Թափոտ լինելու տեսակետից կարելի է բոլոր անցողա-
կան ձևերն առանձնացնել համարյա մերկ ցողուններ մինչև
խիստ թափոտ ձևերը, ցողունների մակերեսը սովորաբար կողա-
վոր է:

Անտոցիանը սովորաբար բացակայում է, թեև մի շարք
բույսերի ցողունների, ծաղկափթթյունների և տերևակոթերի
վրա հաճախ կարելի չէ նկատել դրա առկայությունը: Մեր ա-
ռանձնացրած ձևերն ունեն բավական ուժեղ ճյուղավորման եներ-
գիա: Ճյուղավորումն սկսվում է սովորաբար ծլելուց 12-15 որ-
հետո:

Գլխավոր ցողունները մեծ մասամբ առաջանում են մեկ կե-
տից—սովորաբար հողի մակերեսին ամենամոտ հանգույցից,
բայց կան ձևեր, վերոնք ցողուններ և ճյուղավորումներ տալիս
են գլխավոր ցողունի ստորերկրյա մասերից, ուրեմն դրանք ու-
նեն ճյուղավորման կամ թփակալման նաև չերկրորդ հանգույցը
(ստորերկրյա): Ցողուններն ընդհանրապես յերկար են, վեզետա-
ցիալի վերջին հասնում են $1\frac{1}{2}$ -2 մետրի: Առաջի տերեք տերևնե-
րը 2 զուգ տերևիկներով են, առաջի տերևը չունի նորմալ զար-
գացած բխիկ, նա վերջանում է կարճ սթվածքով: հետևյալ 3-4
տերևների բխիկներն ավելի չերկար են, բայց նույնպես սլարդ են,
այսինքն ճյուղավորված չեն:

Հետագայում, չերք բույսերը մեծանում են, տերևիկների
թիվը տերևների վրա ավելանում է: Նորմալ զարգացած բույ-
սերի տերևները բաղկացած են 6—7 զուգ տերևիկներից, իսկ բե-
խիկներն սկսում են ճյուղավորվել: Տերևների չերկարությունը
3,5 10 սմ-ի:

Տերևիկները սովորաբար չերկարավուն են, գծաձև-չերկա-
րավուն, չերքեմն ձվաձև չերկարավուն կամ ելիպսաձև: Տերևիկ-
ների ծալրերը թոփշ սրված են կամ բութ: տերևիկների չեր-
կարությունը 1,8—4,0 սմ. է, լայնությունը՝ 0,3—0,6 սմ.: Մազ-
մզուկները փափուկ են, նոսր կամ խիտ: Տերևի ցածի մասում
մազմզուկներն ավելի ուժեղ են արտահայտված, քան վերի
մասում: Պատահում են բավական խիտ և կոպիտ մազմզուկներով
ձևեր:

Վիկերի ելիպսաձև կամ ձվաձև տերևիկ ունեցողները սո-
վորաբար աչքի չեն ընկնում ավելի նուրբ և հլուծալի կանաչով
(ցողուններով և տերևներով) և տալիս են ավելի մեծ մասնա-
Անտոցիանը դրանց վրա բացակայում է:

Նեղ և լերկար տերևներ ձևերն ավելի մուգ կանաչ գույնի յեն։ Հաճախ լինում են ներկված առատացիանով։ Տերևի մասնաժամ ավելի սլակաս է։ Ծաղկակիցները կիսասլաքած են։ Վողկույղած ծաղկափթթյունները բազմածաղկանի յեն և ունեն լերկար կոթ։ Ծաղիկների թիվը ծաղկափթթյան մեջ հասնում է 15-25-ի, ծաղկապսակը վարդա-մանուշակագույն է, կամ վարդա կապտագույն։ Ծաղիկները միջին մեծությամբ են՝ 12—15 մմ., ծաղկապսակը նեղ է և մոտ 3 անգամ յերկար է բաժակից։ Բաժակը թեք-փողած է. դանգակած է. ծածկված է մազմզուկներով, մանուշակագույն է։ Բաժակի վերևի առամասերը կարճ են ցածիններից։ Ունդը մերկ է, բաց դեղնավուն մոխրագույն կամ դարչնագույն, յերբեմն լայն բոժրած է, հաճախ չճեղքվող, վորպիսի ձևերը շատ հետաքրքրական են սելեկցիայի տեսակետից։

Մշակութային համար ճեղքվող ձևերը, վորպես թափվող, գործնական նշանակություն չունեն, վորքան էլ նրանք արժեքավոր լինեն մյուս հատկությունների տեսակետից։

Ունդի յերկարությունը՝ 2,4—3,2 սմ.։ Սերմերը քիչ թե շատ գնդած են, սև են, գորշ կամ գորշ-կանաչավուն։ 100 սերմի կշիռը 3,60 գր.։ (Տես նկ. 4)։

Կենսաբանական տեսակետից գոյություն ունեն աշնանացան և գարնանացան ռասաներ։ Նկատի ունենալով հասունության մոմենտը, դրանց մեջ կարելի է նշմարել բոլոր անցողական ձևերը՝ ամենավաղահասներից մինչև ուշահասները։

Բայց դրանց գլխավոր մասնաժամ ավելի մոտ է աշնանացան ձևերին, քան գարնանացաններին։ Թեև դրանց կարելի է ցանել նաև գարնանը, բայց այս դեպքում մոտ մի ամսով ուշանում է ծաղկման շրջանը և չի ստացվում տյն մեծ մասնաժամ, վոր սովորաբար տալիս է աշնանացանը։ Այսպես, աշնան ցանելու դեպքում խոտի բերքը Յերևանի պայմաններում կարելի է վերցնել ապրիլին, իսկ գարնանացանի դեպքում՝ մայիսին։ Տարբերությունը մոտ 1 ամիս է։

Այսպիսի ձևեր գոյություն ունեն և ցորենների մեջ։ Ռուսերեն դրանց «двуручка» յեն անվանում՝ «յերկձեռք», վորոնց կարելի է ցանել թե աշնանը, թե գարնանը։ Դրանք այսպես ասած կիսաաշնանացան ձևեր են հանդիսանում։ «յերկձեռք» ձևերը շատ տարածված են Հայաստանի, Փոքր-Ասիայի և Պարսկաստանի ցորենների մեջ։ Դրանց, ինչպես և մեր այս վիկերին, պայմանականորեն կիսաաշնանացան ձև ենք անվանում։

Վիկերի հիմնական նյութը, վորը մե՛ք սելեկցիայի միջոցով ազնվացրել ենք, առանձնացված և ընտրված է յեղել կո-

տալքի (նախալեռնային գոտի) շրջանի ցորենների ցանքերից, թեև ոգտագործված են յեղեղ նաև լենինականի շրջանի, մասամբ և Արարատյան դաշտի ցորենների նմուշները:

Այս աշխատանքներն ընթացքում պարզվեց, վոր դաշտամուկախոտային թավոտ վիկերի մեջ գտնվում են մեծ թվով բազմահար ձևեր, վորոնք հնձելուց հետո նորից կանաչելու հատկություն ունեն և մի վեգետացիայի շրջանում խոտի չերկուլավ բերք են տալիս, մինչդեռ կուլտուրային ձևերը սովորաբար միայն մեկ անգամ են հարվում և մեկ բերք են տալիս:

Ճիշտ է, նորից կանաչելու ընդունակութուն ունեն նաև վիկերի կուլտուրական ձևերը, բայց այդ հատկութունը նրանց մեջ այնքան թույլ է արտահայտված, վոր միջև անգամ մեր ջրարրի հողերի պայմաններում՝ կանաչած մասսան ախտածի յեմիացն վորպես արոտ ոգտագործելու համար:

Բայց ավելի հետաքրքրական հետեանք տվեցին նույն մուկախոտային թավոտ վիկերի խողանացանքերը (поживные посевы): Այսպես, 1929 թ. ոգոտոտի վերջին նախկին պետ. Համալսարանի, իսկ ներկայիս Գյուղինստիտուտի հողամասում ուսումնասիրվող կուլտուրաների բերքը հավաքելուց հետո ցանել ենք մեր մուկախոտային V. villosa-ի խառնուրդները: Մոտ 2 ամիս հետո, նրանց ծաղկելու ժամանակ, յերբ առանձին բույսերը մոտ մեկ մետր լերդաբուծյան ելին հասել, — վիկերը հարվեցին 1930 թ. գարնանը վիկերը նորից սկսեցին կանաչել և ապրիլի կեսերին լրիվ ծաղկելու շրջանում՝ նրանց կարելի էր նորից, այսինքն՝ 2-դ անգամ հարել:

Այսպիսով, պարզվեց, վոր մեր վիկերը, վորոնց մենք առանձնացրել ենք նրանց վաղահասության և մեծ բերքատվության համար բացի սրանից՝ հանդիսանում են բազմամյաներին, ավելի ճիշտ, յրկամյաներին մոտեցող ձևերը (перенирующие формы), վորոնք սովորական մեկ բերքի փոխարեն — 2 բերք են տալիս, անգամ ձմեռնելուց հետո:

Հետազոտութունը ցույց տվեց, վոր այս վիկերի 2 բերք տալը՝ նրանց կենսաբանական մորֆոլոգիական առանձնահատկու-

թշուհներին հետևանքն է, վորը բնորոշ է այս վիկերի վորոշ ձևերի համար: Բանն այն է, վոր արագ կանաչելու և մեծ մաս-
սա տալու հատկութիւնն ունեն միամյա վիկերի վնչ-բոլոր ձևերը:
Այդ սերտորեն կապված է առանձին բույսերի ճյուղավորման
ձևերի հետ:

Ա. Տուպիկովան իր «միամյա վիկերի բուսաբանական տիրո-
նմիական հետազոտութեան» մեջ ըստ ճյուղավորման ձևերի և
բնութագրի՝ սխեմատիկ կերպով նկարագրում է վիկերի ճյուղա-
վորման հետևյալ 4 հիմնական տիպերը:

I. տիպ. Գլխավոր ցողունի հիմքում առաջանում են 1 կար-
գի ճյուղեր, բայց միմյանց վնչ շատ մոտ: Թվով 5-7: Գլխավոր
ցողունը կողքի ցողունների հետ միասին հավասար է զարգա-
նում կամ բոլորովին չի աճում, և վնչնչանում է: Ցածի 2-3 տե-
րևների բներից 2-դ կարգի ճյուղեր են առաջանում, 10 սմ. բար-
ձրութեան վրա սովորաբար լինում են մոտ 8-10 ճյուղեր: 3-դ
կարգի ճյուղերը շատ հազվագյուտ են:

II. տիպ. Գլխավոր ցողունը առաջին տիպի ձևով է զար-
գանում: Գլխավորումը կենտրոնացած է ցածում՝ արմատների
պարանոցի մոտ, վորտեղից աճընդհատ ամբողջ ամառվա ըն-
թացքում առաջանում են մեծ քանակութեամբ առաջին կարգի
ճյուղեր: Այստեղ է գտնվում կարծես թփակալման հանգույցը:
Սոնավ պայմանները նսլաստում են ճյուղավորման կամ թփա-
կալմանը: 2-դ կարգի ճյուղերը նույն ձևով են առաջանում, ինչ-
պես և I տիպինը, 3-դ կարգի ճյուղեր հազվագյուտ են:

III տիպ. Գլխավոր ցողունը կանգի չի աճում, նա շարունակում
է աճել. նրա ցածի մասերից մեկը մյուսից բավական մեծ հեռավո-
րութեամբ, բայց քիչ թվով առաջանում են 1-ին կարգ ճյուղեր:
Նրանցից ամենի բարձր ամեն մեկի վրա զարգանում են յեր-
կրորդ և յերրորդ կարգի ճյուղեր: Ավելի ուշ, բոլոր ճյուղերի տե-
րևների բներից առաջանում են նորանոր ճյուղեր՝ 10-30 սմ. յեր-
կարութեամբ: Այս հանդամանքի շնորհիվ ավելանում է կանաչ
մասսայի քանակը և բարձրանում է վորակը:

Այս տիպի ճյուղավորման շնորհիվ կանաչ մասսան կենտրո-
նանում է թփերի վերին մասերում:

IV տիպ. Սկզբնական ճյուղերը կամ ցողունները մեծ քա-
նակութեամբ չեն առաջանում մեկ հանգույցից: Հանգույցներն
այնքան ել մոտ չեն գտնվում իրարից, 2-դ կարգի ճյուղերն

ամբողջ ամսվա ընթացքում գոյանում են մեծ թվով: Հաճախ առաջանում են և լերրորդ կարգի ճյուղեր: Կանաչ մասսան բավական հավասար կերպով, խիտ ցանցանման հյուսվածքով պատում է ամբողջ բույսը:

Ճյուղավորության ձևերի տեսակետից Հայաստանի մոլախոտային թավոտ վիկերի մեջ կարելի չի հանդիպել վերոհիշյալ 4 տիպին պատկանող համաբյա բոլոր, ուրեմն՝ թե հնձվող և թե արոտային ձևերին: Մեզ մոտ ընդհանրապես տարածված են այն ձևերը, վերոնց թփոսման հանգուցը գտնվում է ցածի մասում և վերոնց ճյուղերը գոյանում են հողի մակերեսի ամենամոտ կետից:

Շնորհիվ թփոսման հանգուցի ցածր դիրքի— հնձելու կամ արածացնելու դեպքում դրանք բույրոտվին չեն վնասվում, նորից կանաչում են և ավ մասսա չեն տալիս: Ահա, թե ինչով պետք է բացատրել 2 բերք տալու հատկույթ յուր:

Ընդհանրապես դրանց չի կարելի ընդունել, վերպես արոտային ձևեր, վերոնց համար շատ բնորոշ են սփռվող ցողունները: Դրանց մեջ գերիշխում են ավելի շուտ պակտղ կամ կիսապակտղ ձևերը:

Բայց միայն վերջը նշած հանգամանքով չպետք է բացատրել այս վիկերի «բազմահարու թյունը»: Հետադոտոսության ժամանակ պարզվեց, վերյի կամ յաներին մոտեցող մոլախոտային թավոտ վիկերի բազմահար ձևերից շատերը բացի հողի մակերեսին մոտ գտնվող հանգուցից, ունին թփակալման կամ ճյուղավորման նաև ստորերկրյա հանգուցներ: Այս բույսերը ստորերկրյա գլխավոր ցողունի մի շարք կետերից՝ հանգուցներից (2-5), նորանոր ճյուղեր են տալիս: Վերջան նրանց սերմերը խոր են ընկած հողի մեջ, իհարկե մինչև վերոջ սահման, այնքան ավելի չերկար ելնում ստորերկրյա գլխավոր ցողունը: այնքան ել ավելի մեծ թվով են կազմակերպվում և ավելի խոր են ընկնում թփակալման հանգուցները (Տես նկ. 5):

Այսպիսի պայմաններում պարզ է, վոր հանգուցներն ավելի լավ պաշտպանված պետք է լինեն ձմռան ցրտերից և ամառվա շոգից ու չորությունից:

կասկածից դուրս ե, վոր վիկերի ալս ձևերը սխիտի ունե-
նան լավ արտահայտված ցրտադիմացկունութուն։ Յեթե անգամ
հողի մակերեսին մոտ գտնվող թփակալման հանգույցները ցըր-
տահարվեն, այնուամենայնիվ 6-12 սմ. խորության սահմաննե-
րում գտնվող ստորերկրյա ցողունների հանգույցներն ազատ
կլինեն ցրտահարության վտանգից։

Ինչ վերաբերում ե այս ձևերի չորության դիմանալուն,
այդ սխիտի բացատրել նրանով, վոր հողի մեջ գտնվող հանգույց-
ներն ավելի լավ են պաշտպանված արտաքին ամեն տեսակ ազ-
դեցութուններից՝ թե բարձր, թե ցածր ջերմաստիճաններից և
թե նրանց խոշոր տատանումներից և այլն։ Այսպիսի պայման-
ներում ավելի լավ ե պահպանվում նրանց կենսունակութունը։
Մյուս կողմից, չորության դիմանալը կախված ե սրանց վաղա-
հասութունից և համեմատաբար ցածր ջերմաստիճաններում
ածելու հատկութունից։ Իրոք՝ վաղահասության հետևանքով
նրանց դարգացման ֆազը մինչև լրիվ ծաղկելու շրջանը, այսին-
քըն՝ սրանց ոգտագործման մոմենտը, անցնում ե վաղ գարնանը,
չերբ բույսերը միանգամայն ապահովված են ձմռան և գարնան
ընթացքում չեղած մթնոլորտային տեղումներով։

Սերմերը յերես ընկնելու դեպքում հողի մակերեսին մոտ
գտնվող և ստորերկրյա ցողունի հանգույցներն իրար ալնքան
մոտ են դասավորվում, վոր նրանք համարյա միանում են և մեկ
հանգույց կազմում։ Այնպես վոր, ռեգուլյացիայի չեթափելով
ցանքսի խորությունը, կարելի չե ալս կամ ալն չափով պաշտպա-
նել բույսերը մի շարք առարկահաջող կլիմայական ազդեցու-
թյուններից (ցրտեր, չորութուն, քամիներ և այլ)։

Այսպիսով, բացի տնտեսական տեսակետից
միշտ բնականորեն աստիճանի արժեքավոր հատկու-
կություններ ունենալուց, ինչպես՝ վաղահասու-
նություն, մեծ բերքատվություն, բազմահարու-
թյուն և այլն, նկարագրված մոլորտային թա-
վոտ վիկերի համապատասխան աշնանացան ձևերը,
շնորհիվ իրենց կենսաբանական մորֆոլոգիական
առանձնահատկությունների, խոշոր արժեք ունեն
նաև վորպես ցրտադիմացկուն և չորադիմաց-
կուն ձևեր։

Շնորհիվ իրենց այդ բոլոր առանձնահատկությունների, նկարագրված վիճակի մշակության մեջ մտցնելն ամենալայն հնարավորություններ կտա կերի բազա ստեղծելու մեր սոցիալիստական անասնապահության համար և այդ վոչ միայն խոնավության տեսակետից նորմալ շրջաններում, այլ և Անդրկովկասի հարավ-արևելյան կլիմայական և հողային չոր պայմաններում:

Ճիշտ է, չորային այդ պայմաններում վիճակի խողանացանքերը, ամառվան և աշնան ամիսների մթնոլորտային տեղումների համարյա բացակայության պատճառով արդյունք տալ չեն կարող, բայց դրա փոխարեն նույն շրջաններում այդ վաղահաս վիճակի աշնանացանի կամ ձմռանցանի դեպքում (посев на зябь) նրանց նորմալ զարգացման համար գոյություն ունեցող պայմաններն արդեն միանգամայն բավարար են: Ցանվելով աշնանից, նրանք կողտադործեն վաղ գարնան ամիսների խոնավությունը:

Մյուս կողմից, նորմալ խոնավության պայմաններում կամ ջրաբքի հոսքերում հնարավորություն է ստեղծվում այդ վիճակը մշակել, կապելով այն մի շարք կերաբույսերի կամ տեխնիկական կուլտուրաների հետ և մի վեգետացիայի շրջանում ստանալ չերկու բերք, մի բան, վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանում կարևոր խրհրհներից մեկն է:

Այսպիսով, ծխախոտի կամ կաթոֆիլի մշակության դեպքում աշնանացան վիճակը հարվում է, նախած շրջանին, ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին. տեղն իսկույն մշակվում է, վորից հետո անմիջապես տնկում են կաթոֆիլ կամ ծխախոտի սածիլներ: Իհարկե, այս դեպքում վիճակը մշակում են վոչ թե սերմ, այլ խոտ ստանալու համար, իսկ վիճակից հետո այդ հողամասում ընդհանրապես ուշ ցանվող կուլտուրաներ են մշակվում: (Տես նկ. 6).

Անգամ բարձր լեռնային շրջաններում չերկու բերք ստանալու հարցը կարելի է հեշտությամ լուծել, չեթե լին աշնանացան թավոտ վիճակի հետ միասին ցանքա-շրջանառության մեջ մտցնեն վաղահաս կերաբույսեր (կերի դադար, տուրնեպս և այլն) կամ սիլոսաբույսեր (լեզիպացորեն, սորգո և այլն):

Ցերկու բերք կարելի է ստանալ նույնպես և հացահատիկների մշակության շրջաններում կատարելով վիճակի «խողանացան»

ալսինքն՝ ցանկով ցորենի, գարու, վաթսակի և այլ հացաբույսերի բերքը հավաքելուց անմիջապես հետո: Բայց խողանացան հնարավոր և համեմատաբար խոնավ շրջաններում կամ ջրարբի հողերում:

Կարծում ենք, լոր ալս վիկերը կարող են խոշոր դեր կատարել անգամ բամբակագործական շրջաններում՝ միևնույն հողամասից մի վեզետացիայի շրջանում լերկու բերք ստանալու համար (բամբակ և խոտ): Իսկապես, յեթե ուշ աշնանը, բամբակի վերջին բերքը հավաքելուց հետո, ալս հողամասում սկսվառակավոր շաբաթացանների միջոցով ցանվի աշնան մեր թավոտ վիկը, վաղ գարնանը սրա հարելուց հետո (մարտի վերջերից մինչև ապրիլի սկզբները) Ադրբեջանում, իսկ ապրիլի վերջերից մինչև մայիսի սկզբները մեղ մոտ (Հայաստանում) հնարավոր է նույն հողամասում բամբակ ցանելու բոլոր աշխատանքները կատարել՝ առանց ցանքն ուշացնելու: Կլիմայական ավելի բարենաջող պայմանների շնորհիվ ցանքերն Ադրբեջանում ավելի մեծ հաջողությամբ կունենան, քան մեղ մոտ: Գարունն այնտեղ վաղ է սկսվում և ջերմ աստիճանն ավելի բարձր է:

Ընդհանրապես այդպիսի ցանքերի համար անհրաժեշտ է ոգտագործել տեխնիկական այն բազան և այն մեծ հնարավորությունները, վորոնք մեղ տալիս են միայն սոցիալիստական տիպի խոշոր տնտեսությունները:

Ի հարկե, վերջին հաշվով թավոտ վիկերի մշակառությամբ հետ կապված ալս կամ այն խնդիրը, կարելի է լուծել միայն փորձերի միջոցով՝ թե անասնապահական և թե տեխնիկական կուլտուրաների շրջաններում:

Միևնույն ժամանակ ինքնըստինքյան հասկանալի է, թե ինչ արժեք է ներկայացնում դրանց մշակութունը հողերն ագոտով հարստացնելու, ցանքաշրջանառությունը բարելավելու և ցեղահողերը (нары),—վորոնք դեռ ահագին տարածություններ են բունում նպատակահարմար ձևով ոգտագործելու տեսակետից:

Նկատի առնելով ալս բոլորը և այն, լոր խտաբույսերի դաշտամուխոտային և վայրի տեսակներից շատերը (վիկ, դաշտային վոլոր, տափվոլոր, կրնդան, իշաովուլտ և այլ) կերի բազա ստեղծելու գործում կարող են խոշոր դեր կատարել, անհրաժեշտ է, վոր դիտահետազոտական և փորձական—սելեկցիոն հիմնարկները լուրջ ուշադրություն դարձնեն նրանց վրա:



Մյուս կողմից ուշագրավ է և այն հանգամանքը, վերջորհիվ սերմագրտման մասսայական աշխատանքների, մեր դաշտերից սիստեմատիկ կերպով հեռացվում են մյուս մոլախոտերի սերմերի հետ միասին և դաշտամուխոտային բույսերի շատ արժեքավոր տեսակները, վերոնցից շատերն ընդմիջա կարող են կորչել:

Անհրաժեշտ է այս ուղղութիւնամբ նույնպես աշխատանքներ կատարել՝ նրանց հավաքելու, նրանց շուրջը մասսայական հետազոտական աշխատանքներ սկսելու, գործնականում ոգտագործելու համար, չհրաժարվելով միևնույն ժամանակ խորացված սելեկցիոն աշխատանքներից:

Մասնավորապես սելեկցիայի գծով մեր ամբիոնը շարունակում է սկսած աշխատանքները՝ թավոտ վիկերի արժեքավոր և արդունավետ ձևերն առանձնացնելու համար:

МНОГОУКОСНЫЕ ФОРМЫ СОРНО - ПОЛЕВЫХ МОХНАТЫХ ВИК.

Р е з ю м е.

Из научно-исследовательских работ Кафедры Частн. Земледелия Сельско-хозяйственного Института С. С. Р. Армении.

Обследование полевых культур Армении показало, что посевы хлебов сильно засорены сорно-полевыми виками, которые представлены здесь довольно большим числом видов и форм. Они встречаются во всех районах от низменности до высокогорий в пределах 700-3000 м., засоряя вместе с другими сорняками посевы пшениц, полбы, ячменя, чечевиц и т. д. Обычно они встречаются и на горных лугах, на пастбищах и сенокосах.

Почти каждой зоне соответствуют свои виды и формы сорных вик, при чем однолетние формы встречаются во всех зонах, а многолетники преимущественно в нагорных.

Приведем данные по вертикально-зональному распространению вик в Армении.

ВИКИ ОДНОЛЕТНИЕ:

№ п/п.	Название вика	Низмен. 600-1000	Предгорья 1100-1400	Горные 1500-2000	Районы и место распространения
1	<i>V. hyrcanica</i> F. et M.	+	—	—	Араратская или при- Араксинская низмен. Мегри.
2	<i>V. Hajastana</i> Gross.	+	—	—	Эрив. котловина. На сухих камен. склонах.
3	<i>V. Serratifolia</i> Jacq.	+	—	—	Араратск. низмен. на сорн. и влажн. местах.
4	<i>V. picta</i> F. et M.	+	—	—	Араратск. низмен. на лугах по Араксу.
5	<i>V. Pannonica</i> Jacq.	—	+	+	Эривань, Лори, Зан- гезур, Ленинакан, Мегри В посевах.
6	<i>V. grandiflora</i> Scop.	+	+	+	Эрив. на лугах, в са- дах и среди посевов.
7	<i>V. narbonensis</i> L.	+	+	—	Эрив. Адагез. В посе- вах и сорн. местах.
8	<i>V. Ervilia</i> (L.) W.	—	+	+	Эрив. Зангезур. На су- хих камен. склонах среди посевов ячменей.
9	<i>V. cinerea</i> M. B.	—	+	+	Эрив. на степях, сух. местах и в посевах.
10	<i>V. angustifolia</i> Roth.	—	+	+	Эрив. Лори, Ленина- кан. На лугах, в кустар- никах и в посевах.
11	<i>V. peregrina</i> L.	+	+	+	Эрив. в посевах и на сухих местах.
12	<i>V. megalosperma</i> M. B.	—	+	+	Эрив. в посевах.
13	<i>V. Sativa</i> L.	+	+	+	По всей Армении. В посевах, на лугах и в кустарниках.
14	<i>V. villosa</i> Roth.	+	+	+	По всей Армении. В посевах, на лугах и в кустарниках.

Наиболее распространенными видами в Армении являются—*V. sativa*, *V. villosa*, *V. angustifolia*, *V. rapponica* и др., в особенности первые два, которые встречаются во всех зонах и районах. Часто посевы в такой степени засорены ими—(*V. sativa* и *V. villosa*), что получается впечатление пшенично-виковых посевов. Все разнообразие форм *V. villosa* приурочено больше к низменности и предгорьям, а *V. sativa* к нагорьям.

Из многолетних вик в Сов. Армении встречаются следующие:

- 1 *V. Balansae* Boiss. до 2000 м.—Эрив. Агмаган, Лори. В лесах, на лугах, сенокосах и в посевах.
2. *V. truncatula* M. B. » 2000 м.—Эрив. Агмаган. Лори, Делижан. В лесах, кустарниках и тенистых местах.
3. *V. alpestris* Stev. 2546-3000 м.—Эрив. На альпийских лугах.
4. *V. persica* Boiss 1500-2000 м.—Эрив. Агмаган. На щебнист. местах и сенокосах.
5. *V. elegans* Juss. 1200-2000 м.—Агмаган, Даралагез Южно-Гокчинск. хр. На сух. местах, на пастб. и в посевах.
6. *V. stenophylla* Velen. —Эривань, по берегам ручьев. По словам проф. Н. И. Троицкого, в Армении встречается весьма редко. Но больше всего ее можно видеть на Главн. Кавказском хребте.

7. *V. variabilis* Freyn. et sint. 1600-2000 м.—Армаган. Сух. Фонтан, г. Адис, южн. скл. Алагеза. На лугах, сенокосах и среди посевов.

Обычным местом распространения всех этих вик являются горные сенокосы, луга и пастбища. Встречаются в посевах хлебов—*V. variabilis*, *v. elegans*, *v. Balansae* и др. некоторые заходят в леса—*v. Balansae*, *v. truncatula* и др.

Паровое сено в некоторых районах состоит из смеси вик—*v. variabilis*, *v. elegans* и т. п. Вики эти среди армянского населения известны под названиями „хулорс“—(многолетние) и „гюлул“ и „фик“—(однолетние).

В настоящем очерке мы остановимся на тех формах *v. villosa*, которые в процессе их изучения были нами выделены, как формы перенирующие и двуукосные и с которыми в дальнейшем была проделана некоторая селекционная работа. Нам неоднократно приходилось отмечать, что многие из них обладают целым рядом весьма полезных в хозяйственном отношении признаков, как-то, пышным ростом, скороспелостью, сильным побегообразованием, хорошей облиственностью и проч. весьма ценными для кормовых растений признаками. С другой стороны они не менее интересны, как растения аборигенные, произрастающие при неблагоприятных почвенно-климатических условиях Армянского Высокогорья, отличающегося чрезмерной сухостью.

В ботаническом отношении эта группа вик представляет собою пеструю смесь морфологическо-биологических форм, стоящих ближе всего к *v. villosa* Roth.. Вид этот отличается большим разнообразием форм, что повидимому является следствием большого многообразия естественно-исторических и экологических условий их произрастания в Армении; играет роль то, что они перекрестно-опылители.

А. А. Гроссгейм, повидимому, склонен относить их к особому виду *v. Reuteriana*, выделенному Boissier на основании собранного им материала в окр. Тавриза. (1848-1849 г.). Но имея в виду весь комплекс ботанико-морфо-

логических признаков, эти вики подходят ближе к *v. villosa* чем к *v. Reuteriana*.

Из отдельных разновидностей—*v. villosa* установленных нами в Армении, отметим следующие уклоняющиеся от основного типа:

V. villosa Roth.

1. Var. *glabrescens* Roch. —Стебли почти голые. Незначительная примесь.
2. Var. *latifolia* Formanen. —Листочки эллиптические. Дает нежную массу. Незначительная примесь.
3. Var. *albiflora* Schur. —Окраска цветов белая. Встречается редко.
4. Var. *angustifolia* Lindm. —С укороченным цветоносным и небольшим количеством цветков Редкие формы.

В основном, в морфологическом отношении сорно-полевые *v. villosa* Армении можно характеризовать следующими признаками, часто варьирующими у отдельных форм.

Всходы окрашены антоцианом. Появление всходов дружное, обычно на 6-8 день после посева. Стебли в массе представлены полегающими, лазящими формами, хотя в некоторых случаях приходилось наблюдать формы стеляющиеся и полустоячие. По опушению стеблей можно проследить все переходы от сильно опушенных до почти гладкостебельных форм.

У отобранных нами форм—побегообразование довольно сильное, начинается на 10-15-й день, после появления всходов. Главные побеги в большинстве случаев образуются как бы из одного центра—узла ближайшего к поверхности почвы; у некоторых форм они образуются и из подземных частей стебля.

Стебли довольно высокие, к концу вегетации достигают 1½-2 метров. У нормально развитых растений число листочков на листьях доходит до 6-7 пар. Длина листа

3,5—10 см., длина листочков 1,8—4 см. Ширина 0,3—0,6 см. Листочки обычно удлинённые, линейно-продолговатые, иногда овально продолговатые, эллиптические, слегка заострены или притуплены к концу. Опушение б. м. редкое, мягкое. Формы с эллиптическими и более овальными листочками отличаются более нежной и сочной зеленью и дают более обильную массу. Антоцион на них обычно отсутствует. Вики с более узкими, линейно-продолговатыми листочками имеют более темно-зеленую окраску, часто бывают окрашены антоцианом, листовая масса у них меньше. Прицветники-полустреловидные. Цветочные кисти многоцветковые, на длинных ножках. Число цветов на цветоносе 15-25. Окраска венчика розово-фиолетовая, розовато-сине-фиолетовая и т. д. Цветы средней величины 12-16 мм. Венчик узкий, почти втрое длиннее чашечки. Чашечка косо-трубчато-колокольчатая, опушенная, фиолетовой окраски. Верхние зубцы чашечки короче нижних. Отгиб в 2-2,5 раза короче ноготка. Боб голый светло-желтый, серый, коричневый, продолговато-линейный, ромбический-широкий, часто не растрескивающийся, что представляет большой интерес для селекционера. Длина боба 2,4-3,2 см. Семена б. м. шаровидные, черные, бурые, зеленовато-бурые. Вес 100 зерен=3,06 гр.

Биологически они представлены озимыми и яровыми расами. Известны формы от самых скороспелых до весьма поздних.

В массе вики эти стоят ближе к озимым формам, хотя их можно сеять и весной, но тогда они запаздывают с цветением и не дают по крайней мере в неизменности такой большой массы, как при озимом посеве. Но имеются формы, которые можно высевать как осенью, так и весной. Такие формы, как принято их называть — „двуручки“ — существуют и среди пшениц Армении и сопредельных с нею стран (Персия, Турция и т. д.).

Основной материал, который подвергался селекционному улучшению был выделен нами из образцов пшениц, собранных в Котайкском районе (предгорья), хотя были

образцы и из Ленинаканского района и Араратской низменности.

Следует отметить, что в работах по культуре выделенных нами вик принимали участие ассист. Кафедры Частн. Земледелия Б. Гарасефирян (в бывш. Университетском Совхозе „Дзак“) и бывший ассистент той-же Кафедры З. Аствацатрян, который вел культуру изучаемых нами отдельных линий (растений); А. Азатян. оставленной при Кафедре 1930 г.)—было поручено проверочное морфологическое описание около 120 отдельных растений.

При изучении выяснилось, что среди этих сорно-полевых мохнатых вик очень много двуукосных форм, которые благодаря способности отрастания в течение одного вегетационного периода дают 2 хороших укоса сена, меж тем как культурные вики дают обычно лишь один укос.

Еще более интересные результаты получились при пожнивном посеве сорно-полевых мохнатых вик; так смесь таких форм была высеяна пожнивно в последних числах августа 1929 г. на поливном участке б. Госуниверситета, ныне Сельхоз. Института. Приблизительно через 2 месяца, в период цветения, они были скошены, при чем высота отдельных растений достигала около 1 метра. Ранней весной вика стала отрастать и в средних числах апреля была в полном цвету и ее можно было косить вторично.

Таким образом, эти вики выделенные нами, как ранние и двуукосные оказались вдобавок еще перенирующими, как бы 2-х летними формами, дающими вместо обычного одного два полных укоса, даже после зимовки. Их двуукосность является результатом их биологическо-морфологических особенностей, так как способностью быстрого отрастания обладают не все формы однолетних вик. Это связано с характером побегообразования у отдельных растений.

А. Ю. Тупикова в своей работе — „Ботанико-агрономическое исследование однолетних вик“ по характеру и способу ветвления схематически устанавливает четыре основных типа побегообразования у кормовых вик.

I тип. — Главный стебель развивается наравне с боковыми или останавливается в росте, иногда отмирает. Ветви I-го порядка образуются близ основания главного стебля, не очень сближены, числом от 5-7. Из пазух нижних 2-3 листьев образуются ветки 2-го порядка. Ветки 3-го порядка образуются редко.

II. тип. — Главный стебель развивается также, как у типа I. Ветвление сосредоточено внизу у корневой шейки (15-25 веток в начале), откуда непрерывно в течение всего лета образуется большое количество веток также 1-го порядка. Здесь находится как-бы узел кущения. Ветки 2-го порядка образуются, как у типа I. Ветки 3-го порядка редки.

III тип. — Главный стебель не отмирает, растет. На нем внизу на значительном расстоянии друг от друга образуются ветки 1-го порядка в незначительном числе. Еще выше на каждой из них образуются ветки 2-го и 3-го порядка.

IV тип. — Первичные ветви образуются в значительном количестве не из одного узла; междоузлия не очень сближены. Ветви 2-го порядка образуются сейчас-же в большом количестве, а также в течение всего лета. Образуются часто и ветки 3-го порядка.

По характеру ветвления и стеблеобразования, сорные мохнатые вики Армении представлены почти всеми четырьмя типами, не преобладают формы с нижним узлом кущения, у которых побеги образуются у самой поверхности почвы, близ „корневой шейки“. Такие формы после укоса или стравливания, вследствие низкого положения „узла кущения“, который при этом не повреждается — отрастает довольно быстро, чем следует объяснить их двуукосность.

Но не одним этим обуславливается их двуукосность; при их дальнейшем изучении выяснилось, что некоторые из этих сорных мохнатых вик, помимо надземных узлов кущения имеют еще и подземные, т. е. обладают еще и подземной побегообразовательной способностью.

У таких растений в подземной части главного стебля имеется ряд узлов (от 2 до 5), из которых образуются все новые побеги.

Чем глубже закладываются узлы кущения (при сравнительно глубоком высеве семян), тем лучше будут защищены они от морозов и летнего зноя и засухи.

Действительно, если даже подземные узлы погибнут от зимних морозов, или от зноя и высоких температур, то находящиеся на глубине 6-12 см. подземные узлы будут лучше защищены от подобного рода неблагоприятных термических влияний.

С другой стороны их засухоустойчивость является результатом их скороспелости, а также способности расти и развиваться при сравнительно более низких температурах. Действительно первая фаза их развития до периода полного цветения, т. е. до момента их использования—протекает ранней весной, когда растения менее всего нуждаются в влаге.

При мелкой заделке семян, надземные и подземные узлы кущения как-бы сливаются и получается как-бы один неглубоко сидящий узел. Поэтому, регулируя глубину посева, можно в той или другой степени защищать наши растения от целого ряда неблагоприятных климатических влияний.

Таким образом, помимо целого ряда весьма полезных в хозяйственном отношении признаков и свойств, как скороспелость, урожайность, двуукосность и т. д., описанные формы перенирующих сорно-полевых вик, благодаря их морфолого-биологическим особенностям

должны обладать еще такими ценными свойствами, как сравнительная зимостойкость и засухоустойчивость.

Благодаря всем этим особенностям, введение в культуру описанных вик даст широкие возможности для создания кормовой базы для социалистического животноводства и не только в районах нормальной влажности, но даже в сухих почвенно-климатических условиях Юго Восточного Закавказья. Правда при засушливых условиях пожнивный посев мохнатых вик вряд-ли будет иметь успех, вследствие почти полного отсутствия атмосферных осадков в летний и осенний периоды в этих районах; но зато, в случае озимого посева или посева „на зябь“—существующие условия для их оормального развития будут вполне удовлетворительны; они полностью используют весеннюю влагу.

С другой стороны, в районах нормальной влажности или в условиях поливного хозяйства становится возможным в течение одного вегетационного периода позучение двух урожаев, если только культура вик будет увязана с возделыванием технических и кормовых растений. Так, при культуре табака или картофеля—озимая вика, смотря по району, скашивается в последних числах апреля или в первых числах мая, участок распахивается, после чего немедленно приступают к посадке картофеля или к пересадке табачной рассады.

Даже в высокогорных районах вопрос получения 2-х урожаев разрешится легко при сочетании культуры этих мохнатых вик с скороспелыми сортами таких кормовых растений, как турнепс, кормовая морковь и т. п. или при введении в севооборот силосных растений (кукуруза, сорго и т. п.).

Получение 2-х урожаев возможно также в зерновых районах, при пожнивном посеве этих вик, т. е. после сбора урожая хлебов—пшеницы, ячменя, овса и т. д.

Но поживная культура вики будет возможна в сравнительно влажных районах или на поливных участках.

Полагаем, что для получения двух урожаев, даже в районах хлопковых, эти скороспелые озимые вики сыграют крупную роль. Действительно, если поздней осенью, после последнего сбора хлопка сырца, с помощью дисковых или др. сеялок высеять мохнатую вику, весной, как только она будет скошена (март-апрель в Азербайджане, апрель и начало мая в Армении), тот-же участок можно будет использовать для посева хлопчатника и времени для этого будет вполне достаточно. Вследствие более благоприятных климатических условий в Азербайджане, таково рода посевы могут иметь там больше успеха, чем в Армении.

В общем, для всего этого необходимо использовать ту техническую базу и те широкие возможности, которые дают нам только социалистического типа крупные хозяйства.

В конечном итоге, только опытным путем можно будет разрешить ту или иную проблему, связанную с культурой мохнатой вики, как в районах животноводства, так и в районах зерновых и технических культур.

Само собой понятно, какое огромное значение имеет их культура для обогащения почвы азотом, для улучшения севооборотов, и лучшего использования паров, которые еще до сих пор занимают у нас огромные площади.

В виду всего этого, а также сообразуясь с тем, что многие из сорно-полевых и диких форм кормовых трав (вика, полевой горошек, чина, эспарцет, донник и т. п.) в деле создания кормовой базы могут иметь крупное значение—необходимо, чтобы наши научно-исследовательские и селекционные учреждения обратили на них серьезное внимание.


С другой стороны, вследствие проводимых ныне массовых работ по очистке зерна, мы легко можем лишиться очень многих интересных и ценных форм сорничающих растений. Поэтому, необходимо в этом направлении начать массовую работу для их практического использования для интродукции ; необходимо произвести сбор семян, провести

массовое изучение и испытание и т. д. Конечно, в то же время не отказываясь от методической селекционной работы.

В частности по линии селекции наша Кафедра продолжает начатые работы по выделению отдельных высоко-продуктивных форм и этой новой группы многоукосных вик.

ЛИТЕРАТУРА.

1. Dr. E. Boissier et. Gr. F. Buhse.—„Aufzaehlung der auf einer Reise durch Transcaucasien und Persien“—1860.
 2. Boissier—Flora orientalis II 1872.
 3. А. А. Гроссгейм—Флора Кавказа. 1930 г.
 4. А. К. Магакян.—Результаты рекогносцировочного обследования корм. площ. Нор-Баязет. и Даралаг. уездов С. С. Р. Армении. 1930 г.
 5. В. С. Муратова.—Материалы для определения важнейших кормовых вик—Труды по прикл. бот. и Селекции т. XVI в-7 1926.
 6. Е. А. Столетова.—Полевые и огородные культуры Армении.
 7. А. Ю. Тупикова.—Ботанико-агрономическое исследование однолетних вик. Труды по прикл. ботанике и Селекции т. XVI в-1. 1926 г.
 8. Մ. Թումանյան.—Կուլտուրական բույսերի բարձրագույն փոփոխություններ Հայաստանում—1929.
- М. Туманян.—Высотные зоны культ. растений в Армении. 1929 г.





Նկ. 1. Թափոտ վիկի տառջին թռվիլ.
Рис. 1. Куст мохнатой вики.



Նկ. 2. Ուսումնասիրվող բույսերի ընդհանուր տեսքը
Рис. 2. Общий вид изучаемых растений.




Նկ. 3. Վիկիի ընդհանուր տեսքը,
Рис. 3. Общий вид посева.



Նկ. 4. Վիկիի տեսանկյունը
1, Հողի մակերեսի մաս հանդույցը
2, 3, 4—Ստորյերկրյա հանդույցներ
А. Б—Պարարիկներ:

Рис. 4. Отдельный куст вики
1. Надземный узел
2, 3, 4—Подземные узлы
А. В—Клубеньки.



Նկ. 6. Վիկի առանձին բույսը
 1. Հողի մակերեսի մոտ հանգույցը,
 2 և 3 Ստորերկրյա հանգույցներ.

Рис. 6; Отделенный куст вики.

1. Надземные узлы.
2. 3. Подземные узлы.



Նկ. 5. Բազմահար դաշտամալախառնված Վիկի.

1. Հողի մակերեսի մոտ հանգույցը.

2. Ստորերկրյա հանգույցը.


Որդրանի լուսանկար.

Рис. Многоукосная сорно-полевая мохнатая вика.

1. Надземный узел кущения.

2. Подземный узел кущения.

Оригина́л рисунка.



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003161

1412 72 689. (21, 4)

094.

A ^{II}
23838